

ԸՆԴԻՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Մարիամ Արթուրի Աղամյանի

«Անզերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտի

լեզվածանաշողական վերլուծություն»

թեկնածուական ատենախոսության

Վերջին տարիներին հաճախակի են դարձել տարբեր լեզուների լեզվական միավորների գուգաղրական-համեմատական ուսումնասիրությունները։ Նման հետազոտություն է կատարել նաև սույն ատենախոսության հեղինակը՝ Մարիամ Աղամյանը, ով իր աշխատանքում առաջին անգամ լեզվածանաշողական վերլուծության է ենթարկել անզերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտում ընդգրկված բառային միավորները։ Ատենախոսության նպատակն է հիշյալ միավորների գուգաղրման միջոցով բացահայտել իմաստային այս դաշտի միավորների առանձնահատկություններն ու ներհամակարգային հարաբերությունները, ինչպես նաև հասկացության լեզվամշակութային ընդհանրություններն ու ազգային յուրահատկությունները։ Նախանշված նպատակին հասնելու համար ատենախոսն իր առջև դրել և հաջողությամբ լուծել է մի շարք խնդիրներ. դրանք են՝ ներկայացնել «տարիք» հասկացության միջզիտակարգային բնույթը, տարիքային խմբերի ավանդական դասակարգումները։ Աշխատանքում անդրադարձ է կատարվել «սերունդների տեսությանը» և դրա լեզվականացման առանձնահատկություններին, դասակարգվել են անզերենի և հայերենի «տարիք» արտահայտող միավորները՝ ըստ տարբեր գործոնների։ Դիտարկվել են նաև նշված միավորների իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները, ոճական նշութավորվածությունը, բացահայտվել են իմաստային վերաբերելիության դրսերումները, ինչպես նաև ուսումնասիրվել «տարիք» իմաստն արտահայտող բառերի լեզվածանաշողական առանձնահատկությունները, ընդգծվել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, բացահայտվել միավորների գուգորդումները։

Ուսումնասիրությունն իրականացվել է միանգամայն ճիշտ ընտրված գուգաղրական, տիպարանական, նկարագրական, բաղադրիչների վերլուծության, հարցման մեթոդներով։

Կարծում ենք՝ թեման արդիական է, քանի որ ատենախոսը փորձել է բացահայտել ազգային լեզվամտածողությունների առանձնահատկությունները և դրանց դրսորումները անզերենում և հայերենում:

Աշխատանքի կառուցվածքը բխում է ատենախոսության մեջ արծարծվող խնդիրներից: Այն բաղկացած է ներածությունից, երեք զլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածության մեջ ատենախոսը ներկայացնում է հարցի պատմությունը, տարբեր զիտնականների հետաքրքրությունը «տարիք» հասկացության նկատմամբ, անդրադառնում նաև «սերունդների տեսությանը»:

Առաջին զյու նորս ենթագլուխներում հեղինակը դիտարկում է «տարիք» հասկացության մեջնաբանությունները տարբեր զիտություններում, այդ թվում՝ նաև լեզվաբանության մեջ, ապա ներկայացնում տարիքային ավանդական դասակարգումները անզուամերիկյան և հայկական լեզվամշակույթներում: Այս զյուում անդրադարձ է կատարվում նաև «սերունդների տեսությանը»: Մանրամասն վերլուծելով նշված աշխատանքը և զուգադրելով նրա առաջարկած տարիքային սանդղակը անզուամերիկյան և հայկական համապատասխան պարբերացումների հետ, ատենախոսն իրավացիորեն արձանագրում է, որ «սերունդների տեսությունը» մի կողմից՝ համալրում է լեզուների բառային ֆոնդը նոր բառերի և հասկացությունների նոր իմաստների ներմուծմամբ, մյուս կողմից՝ հիշյալ տեսությունն առաջարկում է ավելի լայն և ընդհանրական պարբերացում, քան հայ և անզուամերիկյան մշակույթները: Այստեղ դասակարգվում են նաև անզուամերիկյան և հայկական լեզվամշակույթներում ընդունված տարիքային աճի ու զարգացման պարբերացումները:

Ատենախոսության երկրորդ զյուում հեղինակը ներկայացնում է հայերենի և անզերենի «տարիք» իմաստն արտահայտող միավորների իմաստային առանձնահատկությունները, անդրադառնում «իմաստային դաշտ» հասկացությանը, դրա ներհամակարգային հարաբերություններին նշված լեզուներում, ընդգծում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: Այստեղ մանրամասն վերլուծվում և դասակարգվում են նաև «տարիք» իմաստն արտահայտող բառերի իմաստային բաղադրիչները, ինչպես նաև կատարվում է հիշյալ իմաստային դաշտի բաղադրիչների բառակազմական առանձնահատկությունների վերլուծություն: Այս զյուում

խոսվում է նաև «տարիք» հասկացությունն արտահայտող դաշտում առկա փոխակարգման դեպքերի մասին: Ներկայացվում են զուգաղրվող լեզվական միավորների թարգմանության առանձնահատկությունները, վերլուծվում անզերենի և հայերենի իմաստային համապատասխան դաշտերը կազմող միավորների ոճական նշութավորվածությունը:

Երրորդ զիսում անդրադարձ է կատարվել անզուամերիկյան և հայկական լեզվամշակույթներում «տարիք» հասկացության ընկալմանը, ինչը բացահայտվել է հայախոսների և անզիախոսների շրջանում կատարված հարցումների հիման վրա: Ելնելով հարցումների արդյունքներից՝ ատենախոսը ներկայացրել է նշված հասկացության ընկալման ընդհանրությունները և յուրահատկությունները դիտարկվող լեզվամշակույթներում:

Հետազոտության իրականացման ճիշտ մեթոդները ատենախոսին հնարավորություն են ընձեռել՝ կատարելու միանգամայն ճիշտ եզրահանգումներ: Օգտագործված գրականության ցանկը ցույց է տալիս, որ հեղինակը քաջ ծանոթ է թեմային առնչվող տեսական գրականությանը: Ուսումնասիրության արդյունքները պատկերավոր կերպով արտացոլված են բերված արյուսակներում: Ուշագրավ են նաև երկու հավելվածները: Սեղմագիրը, ինչպես և հրապարակումները ճշտորեն ներկայացնում են ատենախոսության բովանդակությունը: Մ. Աղամյանի ատենախոսական աշխատանքը կարևոր քայլ է լեզու-մշակույթ-ճանաչողություն աղերսների ուսումնասիրության ասպարեզում և կարող է նպաստել լեզվաբանական ընդհանրությների բացահայտմանը:

Այս ամենով հանդերձ՝ կցանկանայինք արտահայտել որոշ նկատառումներ, ցանկություններ և առաջարկություններ:

1. Աշխատանքում (էջ 8) նշվում է, որ հայերենի «ծեր» բառը չի արտահայտում փորձառություն իմաստը: Գուցե բառը նման իմաստով օժտված չէ, սակայն, օրինակ, ծեր աղվես դարձվածքում ակնհայտ է փորձառության իմաստը:

2. Ելնելով I կետից՝ առաջարկում ենք, որ հետագա աշխատանքում ատենախոսն անդրադառնա նաև անզերենի և հայերենի «տարիք» հասկացության ոչ միայն բառային, այլ նաև դարձվածքային առկայացումների համեմատական բնութագրմանը, քանզի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշ իմաստներ, բացակայելով բառերի շարքում, առկայանում են դարձվածքների ոլորտում,

ինչպես, օրինակ՝ *Ճեր աղվես, կարը պոռշին չի չորացել, մի մատ երեխա, green years, grey hair, give sb grey hairs* և այլն:

3. Հասկանալի է, որ աշխատանքի ծավալը հնարավություն չի ընձեռել՝ բերելու օրինակներ տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ նաև գեղարվեստական գրականությունից, ինչն, անշուշտ, կ ավելի կրաքրացներ հետազոտության գործնական-կիրառական նշանակությունը։ Ցանկալի է, որ իր հետագա աշխատանքում ատե-նախուսն ուշադրություն դարձնի նաև այս հարցին։

4. Ցանկալի է, որ հետազայռում ատենախոսն անդրադառնա նաև այնպիսի բառերի, ինպիսիք են՝ նաև, ապի, իտիս, պուճուր, տղեկ, չոճուխ, *lad*, *guy* և այլն:

Նշված դիտարկումները մասնակի բնույթ են կրում և ամենափոք չեն ազդում ատենախոսության գիտական արժեքի վրա: Մարիամ Աղամյանի աշխատանքն իր բոլոր արժանիքներով, ուսումնասիրության խորությամբ, համակողմանիությամբ, գիտական պատշաճ մակարդակով, տեսական և գործնական մեծ արժեքով լիովին բավարարում է թեկնածութական ատենախոսությանը ներկայացվող պահանջները, իսկ նրա հեղինակը միանգամայն արժանի է իր հայցած գիտական աստիճանին: Ուստի, ամփոփելով մեր խոսքը՝ միջնորդում ենք մասնագիտական խորհրդին՝ Մարիամ Աղամյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդիմախոս՝  Հ.Զ. Ղազարյան
Բանգհույս.թեկն., բոցենս

Հաստատում եմ բ.գ.թ., դոց.

Հ. Ղազարյանի ստորագրությունը:

ՀԱՊՀ գիտության քարտուղար՝ *Steinoff* Ռ.Ս. Հովհաննիսյան
ԱՀԱՏԻ ՊՈՂԱԿԱՆ
ՊՈԼԻՏԵΧՆԻԿԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

